№ 38 Մարտի 5 (17) 1882 Մարտի 5 (17) № 38

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարեգործութիւնը մեր մէջ։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Սերբիա։ Գերմանիա։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Առողջապահական նկատողութիւններ։

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ

—

Երկար տարիների ընթացքում, բացի Բագուի „Մարգասիրական“ ընկերութենից, ոչինչ ուրիշ բարեգործական ընկերութիւն չը կար Կովկասեան հայերի մէջ։ Բարեգործութիւնը մասնաւոր անձանց, անհատների ձեռքումն էր։ Վերջին ժամանակ, երբ մեր մամուլը սկսեց աւելի և աւելի նշանակութիւն ու ժողովրդականութիւն ստանալ, մամուլը յանձն առաւ կատարել այլ և այլ բարեգործական գործեր։ Երկար ժամանակ „Մշակը“ մնաւանդ, կատարում էր բարեգործական հիմնարկութեան պաշտօնը։

Նկատելով այդ անբնական դրութիւնը, համոզված լինելով որ մամուլը չէ կարող միշտ կատարել այդ տեսակ պաշտօն, մի և նոյն ժամանակ տեսնելով որ մասնաւոր անձանց ոյժերը բաժանված են միմեանցից, մենք առաջինը եղանք որ առաջարկեցինք կամ տեղափոխել Բագուի ընկերութեան նիստը Անդրկովկասի կենտրոն, Թիֆլիս, կամ հիմնել այստեղ մի այլ, ընդհանուր հայկական բարեգործական ընկերութիւն։

Այդ տեսակ ընկերութիւն պէտք է ունենար ընդարձակ պրոգրամ, բայց գլխաւորապէս լայն, ժամանակի պահանջման համեմատ ընդարձակ ոգի և ուղղութիւն, որպէս զի միացներ իր մէջ ամբողջ Կովկասեան հայութեան բարեգործական նպատակները, գրաւէր բոլորի համակրութիւնը, և լինելով կենտրոնական ընկերութիւն, ստեղծէր դաւառներում մանաւոր ճիւղեր, որոնք փոքրիկ առուակների պէս հոսէին գլխաւոր գետի մէջ և կազմէին այդպիսով մի ընդհանուր, բազմաթիւ ճիւղերի վրա ճիւղաւորված բաղադրեալ մարմին։ Հարկաւոր էր որ այդ տեսակ ընկերութիւն ուժեղ ձեռքերով կառավարվէր, որպէս զի միացներ, ամփոփէր իր մէջ բոլոր եղած մանր բարեգործական նպատակները։ Բայց դրա համար հարկաւոր էր որ այդ հիմնվող ընկերութիւնը լայն հայեացքներ, լայն ոգի ունենար, միակերպ վերաբերվէր դէպի կովկասեան բոլոր հայերը, առանց խորութիւն դնելու նրանց կրօնի, դաւանութեան մէջ և այդ սկզբունքը պէտք է մոցներ, պարզ կերպով արձանագրէր իր կանոնագրութեան մէջ։

Բայց այդ դեռ բաւական չէ։ Հարկաւոր էր որ ընկերութիւնը կառավարվէր այնպիսի ուժեղ, եռանդոտ, հեղինակութիւն ունեցող ձեռքերով, որ գրաւէր ամենքի համակրութիւնը և ինչ որ բարեգործական գործ կայ մեր ազգի մէջ, ինքն կատարէր, իր հիմնարկութեամբ փոխարինէր մեզ համար այն ամեն մանր մունր բարեգործական ձգտումները և գործերը, որոնք ջոկ ջոկ, միմեանցից անկախ գործելով, ջլատում են միշտ մի հասարակութեան ոյժերը։

Երկուսից մին. կամ այդ ընկերութիւնը պէտք է ոյժ ունենար իրագործել մեր վերև ասածը, կամ եթէ չէր զգում իր մէջ այդ ոյժը, պէտք է բաւականանար մի աւելի նեղ, համեստ պրոգրամայով և հեռացնէր կարողութեան համեմատ ընդարձակէր իր պրոգրամը։

Նեղ պրոգրամ ուրիշ բան է, նեղ հայեացք ու ոգի ուրիշ բան է։ Կարելի է հեռանել լայն, ընդարձակ պրոգրամայից, բայց ունենալ նեղ, սահմանափակ սկզբունքի վրա հիմնված հայեացք ու ոգի. ուրիշ կողմից կարելի է նեղ, սահմանափակ նպատակ ու պրոգրամ ունենալ, բայց լայն, ընդհանուր մարդկային ոգի ու հայեացք։

Օրինակի համար կարելի է հիմնել մի ընկերութիւն որ շատ սահմանափակ նպատակ ու պրոգրամ ունենար, դիցուք նիւթապէս օգնել միմիայն Թիֆլիսի գիմնազիայում ուսում առնող երիտասարդութեանը, բայց մի և նոյն ժամանակ, լայն, ընդարձակ ոգի, հայեացք և ուղղութիւն ունենալ, այն է օգնել նոյն դպրոցի ամեն ազգի, և կրօնի գիմնազիստներին։ Կարելի է, ուրիշ կողմից, շատ ընդարձակ պրոգրամայով ընկերութիւն հիմնել որ իրան նպատակ դնէր և դպրոցներ հիմնել, և ուսում առնողներին օգնել, և գրքեր տպել, և տպարաններ ու գրադարաններ հիմնել, և հարկաւոր ժամանակ սովեալներին օգնել և նպաստել արհեստներին, արուեստներին, գիւղատնտեսութեան ծաղկմանը և այլն և այլն, —բայց մի և նոյն ժամանակ տալ այդ ընկերութեանը մի նեղ, սահմանափակ ոգի, նպատակ ունենալով միմիայն հայ-լուսաւորչական անդամներից բաղկացած ընկերութեան խորհուրդ կազմել, միայն հայ լուսաւորչականներին ընդունել, որպէս ընկերութեան անդամներ և միայն հայ-լուսաւորչականներին օգնել, անտես առնելով ազգութեանը պատկանող միւս, բաւական բազմաթիւ մասերը։

Ինչ և իցէ, ընկերութիւնը հիմնվեց մեզանում։ Բայց հէնց որ հիմնվեց, անմիջապէս ուրիշ հայաբնակ քաղաքներում և նոյն իսկ Թիֆլիսում սկսեցին հիմնել աւելի կամ պակաս ընդարձակ պրոգրամայով ուրիշ նոր նման բարեգործական ընկերութիւններ։ Այդպիսով կովկասեան կենտրոնական, ընդհանուր հայկական ընկերութիւնը անընդունակ հանդիսացաւ ամփոփել, պարունակել, բովանդակել իր մէջ ամբողջ կովկասեան հայութեան բարեգործական ձգտումները, անկարող եղաւ յաղթել հայերին յատուկ երկպառակութեան ոգին, հերձուածողական յատկութիւնը, այժ չունեցաւ տիրապետել իր հեղինակութեամբ բոլորի վրա և գրաւել ամենքի համակրութիւնը, վերջ դնելով, գոնէ այս գործի մէջ, հայերի այն յատկութեանը,—ոչինչ չանել, մինչև որ մի ուրիշը մի գործ չը սկսի, իսկ հէնց որ մէկը մի որ և է գործ է սկսում, իւրաքանչիւր հայն էլ, փոխանակ այդ ընկողի հետ միանալու, անմիջապէս նրա ընկսած գործի նման մի անկախ գործն էլ ընկսում է, և եթէ ինքն չէ կարողանում գլուխ բերել, իրագործել նոյնանման մի գործ, նրան անչափ մեծ զուարճութիւն է պատճառում, բաւականութիւն է տալիս՝ գոնէ ուրիշի գործը քանդել։

Եւ ահա, չը նայելով որ մենք այժմ ունենք մի կենտրոնական բարեգործական ընկերութիւն, ամեն տեղ սկսել են հիմնվել ուրիշ նրա նման ընկերութիւններ, բացի սորանից, նոյն իսկ Թիֆլիսում, ամեն օր, այլ և այլ բարեգործական նպատակներով շարունակվում են, անկախ այդ ընկերութենից հաւաքվել զանազան գումարներ։

Երբ որ ընկերութիւնը հիմնվում էր, մենք ցոյց էինք տալիս որ նա իր պրոգրամի կողմից չափից դուրս բաղադրեալ և ընդարձակ է, իսկ իր ոգու, ուղղութեան, հայեացքների մէջ չափից դուրս նեղ, սահմանափակ է։ Այն ժամանակ մեզ դէմ էին և ընդունեցին ամբողջութեամբ կանոնագրութիւնը առանց փոփոխելու։ Իսկ այժմ, երբ ամեն բան վերջացաւ, մարդիկ սկսեցին գործել հաստատված ընկերութենից դուրս, անտես առնելով նոյն ընկերութիւնը։

Անթիւ բարեգործական մանր գործերը կատարվում են այդպիսով ընկերութենից դուրս և ընկերութիւնը անընդունակ հանսեան հայութեան բարեգործական ձգտումները, անկարող եղաւ յաղթել հայերին յատուկ երկպառակութեան ոգին, հերձուածողական յատկութիւնը, այժ չունեցաւ տիրապետել իր հեղինակութեամբ բոլորի վրա և գրաւել ամենքի համակրութիւնը, վերջ դնելով, գոնէ այս գործի մէջ, հայերի այն յատկութեանը,—ոչինչ չանել, մինչև որ մի ուրիշը մի գործ չը սկսի, իսկ հէնց որ մէկը մի որ և է գործ է սկսում, իւրաքանչիւր հայն էլ, փոխանակ այդ ընկողի հետ միանալու, անմիջապէս նրա ընկսած գործի նման մի անկախ գործն էլ ընկսում է, և եթէ ինքն չէ կարողանում գլուխ բերել, իրագործել նոյնանման մի գործ, նրան անչափ մեծ զուարճութիւն է պատճառում, բաւականութիւն է տալիս՝ գոնէ ուրիշի գործը քանդել։

Եւ ահա, չը նայելով որ մենք այժմ ունենք մի կենտրոնական բարեգործական ընկերութիւն, ամեն տեղ սկսել են հիմնվել ուրիշ նրա նման ընկերութիւններ, բացի սորանից, նոյն իսկ Թիֆլիսում, ամեն օր, այլ և այլ բարեգործական նպատակներով շարունակվում են, անկախ այդ ընկերութենից հաւաքվել զանազան գումարներ։

Երբ որ ընկերութիւնը հիմնվում էր, մենք ցոյց էինք տալիս որ նա իր պրոգրամի կողմից չափից դուրս բաղադրեալ և ընդարձակ է, իսկ իր ոգու, ուղղութեան, հայեացքների մէջ չափից դուրս նեղ, սահմանափակ է։ Այն ժամանակ մեզ դէմ էին և ընդունեցին ամբողջութեամբ կանոնագրութիւնը առանց փոփոխելու։ Իսկ այժմ, երբ ամեն բան վերջացաւ, մարդիկ սկսեցին գործել հաստատված ընկերութենից դուրս, անտես առնելով նոյն ընկերութիւնը։

Անթիւ բարեգործական մանր գործերը կատարվում են այդպիսով ընկերութենից դուրս և ընկերութիւնը անընդունակ հան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վերոյիշեալ վատ սովորութիւնների առաջացրած տխուր հետևանքների վրա դատելը ընթերցողին թողնելով՝ ես կը բաւականանամ միայն նրանով, որ կաշխատեմ ցոյց տալ այն մեծամեծ վնասները, որ հասցնում են մեր վաճառականներին (նրանց միջոցով և մեզ) հասարակական կանայք։ Այս վերջինները բաւական չէ, որ հարիւրներ են գցում նրանց ջղերից, բառոյականապէս ստորացնում-ցածացնում են նրանց, բաւական չէ՝ որ նրանց մոռացնել են տալիս ամենասուրբ պարտականութիւնները դէպի ազգն և ընտանիքը՝ այլ և պարզևում են նրանց (գիտակցաբար թէ անգիտակցաբար) զանազան վարակիչ հիւանդութիւններ, որոնցից ամենասարսափելին և ամենավատթար հետևանքներ առաջացնողը վեներական հիւանդութիւնն է։ Այդ խոտը հազարաւոր մարդասված խոտն է։ Այդ խոտը հազարաւոր կանց, հազարաւոր ընտանեաց թշուառութեան և անբաղդութեան պատճառ է եղել և պիտի լինի, քանի որ գոյութիւն կունենան նրա զարգացման և տարածվելու յաջող պայմանները։ Դեռ լաւ է, եթէ նրա հետևանքների ծանրութիւնը ամբողջապէս մեր այդ պարտնների—վաճառականների վրա միայն ընկնէր, որովհետև նրանք են յանցաւորները և ուրեմն՝ նրանք էլ միայնակ պիտի տանեն այդ դատնութիւնը. բայց դժբաղդաբար այդ այդպէս չէ լինում. այդ անկուշտ, ագահ խոտը մէկին վարակելով չէ բաւականանում, այլ սրանից անցնում է միւսին, երրորդին և այլն. նա միշտ և անդադար աշխատում է նոր օրսեր անել, կարծես՝ թէ վախենում լինի, որ չը լինի թէ իր սերունդը փչանայ, իրա տարածվելուն վերջ դնվի։ Սրա վրա աւելացրէք և այն հանգամանքը, որ մեր հիւանդները հոգ չեն տանում կանոնաւոր կերպով, արմատականապէս բժշկվելու և համարեա ոչ մի նախազգուշական միջոցներ չեն գործ դնում այդ խոտի տեղափոխվելու և տարածվելու առաջն առնելու համար—այն ժամանակ զուք կարող էք երևակայել ձեզ այն վնասի մեծութիւնը, որ կարող է պատճառել մեզ այդ հիւանդութիւնը։

Վերևում ես ասեցի՝ որ եթէ յիշված խոտով վարակվածները աշխատէին կարգին և հաստատապէս բժշկվելու և այնքան անհոգ չը լինէին հարկաւոր նախազգուշութիւնները գործ դնելու՝ այն ժամանակ այդ խոտի տխուր հետևանքները տեղի չէին ունենայ կամ գոնա նրանից առաջացած բոլոր վնասները ամբողջապէս կամփոփվէին այդ հիւանդութիւնը անմիջապէս սատացողների մէջ միայն. բայց թշուառութիւնը հէնց դրանից է, որ մեր հիւանդ վաճառականները տգիտութեան և սուտ ամօթխածութեան պատճառով ոչ մէկին են անում և ոչ միւսը, չը նայելով՝ որ նրանք պակասութիւն չեն զգում ոչ փողի և ոչ էլ մասնագէտ-բժիշկների կողմանէ։ Նրանցից շատերը հիւանդանալով, իսկոյն չեն դիմում բժշկի օգնութեանը, այլ մի առժամանակ դեռ սպասում են—ամաչում են բժշկին յայտնել իրանց ցաւը կամ ազիտարար կարծում են՝ թէ այս վերջինը ինքն իրան կանցնի։ Ի հարկէ այդ ցաւը նրանց չէ ըսպասում, նա շարունակում է զարգանալ և աւելի սուր բնաւորութիւն է ստանում, և ահա այդ ժամանակ միայն մեր հիւանդները համոզվում են՝ որ սխալվել են իրանց կարծիքում և որ աւելորդ ըսպասելը մեծ յիմարութիւն կը լինի ու դիմում են, վերջապէս՝ բժշկի խորհրդին։ Բայց մի ցաւ էլ այստեղ է առաջ գալիս. նրանք մշտապէս մի և նոյն բժշկի նչեն այցելում, այլ միքիչ ժամանակ մէկի մօտ բժշկվելուց՝ թողնում են նրան և միւսին են դիմում, սրանից անցնում են երրորդին և այլն, այնպէս որ մի համեմատաբար կարճ միջոցում նրանք 4—5 բժիշկներ են փոխում։ *) Բացի դրանից՝ նրանք բարեխղճաբար չեն կատարում բժշկի տուած խորհուրդները և ճշտութեամբ չեն գործադրում նրա նշանակած դեղօրայքը։ Կը յիշեմ մի անմոռանալի անզգուշութիւն ես այդ հիւանդների կողմից, որը պարզ ցոյց կը տայ, թէ առհասարակ ինչպէս թերի հասկացողութիւն ունեն նրանք կանոնաւոր բժշկութեան մասին և մասնաւորապէս՝ թէ ինչպիսի թոյլ և թեթև համարումն և յարգանք ունեն նրանք դէպի բժշկի հեղինակութիւնը։ Պատահում է, որ հիւանդի բարեկամներից մէկը նրան մի որ և իցէ դեղ է առաջարկում հաւատացնելով՝ որ այդ դեղը շատ լաւն է և որ նրան գործածելով՝ նա շուտով կառողջանայ. հիւանդն էլ առանց երկար մտածելու՝ ուրախութեամբ ընդունում է նրա առաջարկածը, իսկ բժշկի տուած դեղօրայքը, իրրև անպէտք՝ դէն է ձգում։ Յաւալին այն է, որ շատ անգամ այդ բարեսիրտ ընկերի առաջարկած դեղը մի բոլորովին ուրիշ հիւանդութեան դէմ է նշանակված լինում բժշկից, պատահում է նմանապէս, որ այդ միջոցը բժշկից տրված է լինում հէնց մի և նոյն ցաւի դէմ, որից մեր հիւանդը տանջվում է. բայց այդ դեղը կարելի է գործադրել այդ հիւանդութեան դէմ այն ժամանակ միայն, երբ նա արդէն հասած կը լինի իր զարգացման յայտնի ֆազային։ Հիւանդը, ի հարկէ՝ յատոյ ինքն էլ նկատում է իր տրած թեթևամտութիւնը և աշխատում է ուղղել իր սխալը կրկին բժշկին դիմելով և նրա նշանակած դեղօրայքը ճշտութեամբ գործադրելով. բայց բաւականին ուշ է լինում և իր ընկերի տրած այդ բարերարութիւնը նրա վրա էական չէ նստում, որովհետև հիւանդութիւնը մի առժամանակ ազատվելով իր թշնամուց՝ (դեղօրայքից) աւելի զարգանում և վատթար կերպարանք է ստանում, այնպէս որ՝ եթէ առաջ, օրինակ՝ մի ամիս բաւական էր ցաւից կատարեալապէս բժշկվելու համար՝ այժմ հարկաւոր են 2—3 ամիս կամ դուցէ էլ աւելի։

*) Եթէ այդ թափառելը մի հիմնաւոր պատճառունենար, օրինակ՝ եթէ բժշկի անբարեխղճութիւնը կամ անհմտութիւնը լինէր դրա պատճառը, այն ժամանակ նրանց այդ վարմունքը խելացի կը լինէր. բայց դա չէ պատճառը, այլ նրանց երևակայական անհամբերութիւնը և թեթևամտութիւնը. եթէ մի կարճ միջոցում նրանք չեն լաւանում՝ կարծում են, որ բժիշկն է մեղաւոր դրանում և դրա համար իսկոյն փոխում են նրան։

[illegible]

[illegible]

[illegible]

տուած, յանկարծ լսում ենք, որ հոգեոր իշխանութեան հրամանով այդ քահանան կրկին ներումն ստանալով, դարձեալ շարունակում է կատարել իր պաշտօնը։ Այստեղ մի հանելուկ կայ, և այդ հանելուկը, հաւատացած ենք, որ բայի Մանկունուց, ուրիշ ոչ ոք չէ կարող լուծել։»

—

Զեռնածու Օբերտ Լէնց շարունակում է Արծրունու թատրոնում իր ներկայացումները տալ մեծ աջողութեամբ։ Թէև թատրոնը միշտ լի չէ լինում, բայց դարձեալ պարոնը լաւ եկամուտներ ունի։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալ հաշիւը Արծրունու թատրոնում փետրվարի 1-ին յօգուտ ԹԻՖԼԻՍԻ 2-րդ արական գիմնազիայի չքաւոր աշակերտների տուած կոնցերտի։ Ծախած տոմսակներից գոյացաւ 538 ր. 70 կ. գումարը, ծախված են, բացի սրանից աւելորդ տեղերը թատրոնում 20 ռուբլ գումարի, ուրեմն ընդամենը գոյացաւ 558 ր. 70 կ.։ Ծախս եղել է. թատրոնի դիշերվայ ծախս, տոմսակների և աֆիշների տպելը, աֆիշների տարածելը, պլանօի բերելը և լարելը և այլն մանր ծախսեր ընդամենը 83 ր. 85 կ.։ Վճարած է Տ. և Դ. երաժիշտներին 25 ր.։ Ընդամենը ծախս եղել է 108 ր. 85 կ.։ Ծախսը դուրս գալով մուտքից մնաց 449 ր. 85 կ. զուտ արդիւնք։ Այդ փողից 395 ռուբլ բաժանվել է գիմնազիայի հինգերորդ, վեցերորդ և եօթերորդ դասատների ամենաչքաւոր աշակերտների մէջ։ Նպաստ ստացած աշակերտները թւով ութ հոգի են։ Իսկ 54 ր. 85 կ. տրվեցաւ 2-որդ գիմնազիայի աղքատ աշակերտներին նպաստող ընկերութեան դանձարանը։ Աշակերտները յայտնում են իրանց խորին շնորհակալութիւնը կոնցերտին բոլոր մասնակցողներին։

—

Տպելով «Մշակի» ներկայ համարում բժիշկ Նաւասարդեանի նամակը, այդքան միայն կասենք նրա առիթով։ Քննադատել մի հասարակական հիմնարկութիւն, որ մեկ մարդուն չէ պատկանում, այլ ընդհանուրին, չէ նշանակում հայհոյել։ Քննադատել չէ նշանակում չօշափել սրա կամ նրա պատիւը։ Ուրիշ կողմից, ինչպէս արդէն պատասխանեցինք բարեգործական ընկերութեան խորհրդին «Մշակի» № 18 մէջ, ոչինչ նշանակութիւն չունի որ իրանք խորհրդի անդամները համարում են ընկերութեան պրոգրամը ոչ նեղհայեաց, ոչ էլ սահմանափակ։ Ոչ թէ նրանք, այլ մենք, հասարակութիւնը, պէտք է ընկերութիւնը համարենք ընդարձակ, կամ սահմանափակ։ Ընկերութեան խորհրդի նախագահի կամ անդամների, ընկերութեան հիմնողների անձնական համոզմունքը ոչինչ արժէք չունի, քանի որ այդ համոզմունքը պարզ և որոշ յօդուածի ձևով արձանագրված չէ նոյն իսկ կանոնագրութեան մէջ։ Այժմեան անդամները կարող են ամենաազատամիտ մարդիկ լինել, բայց ժամանակով, երբ նրանց տեղը ուրիշները կընտրվեն, կանոնագրութիւնը ոգով նեղհայեաց և սահմանափակ լինելով, ինչ նշանակութիւն կունենան եղած անդամների լայն անձնական հայեացքները, քանի որ կանոնագրութեան մէջ այդ հայեացքները չեն ձևակերպվել ու մարմնացել։ Բաւական չէ որ պ. Նաւասարդեան կասի «ես համարում եմ ընկերութեան կանոնագրութիւնը ընդարձակ», բայց Նրանից յետոյ ընտրվածը նոյնպէս կատարեալ իրաւունք կունենայ ասել «ես համարում եմ ընկերութեան կանոնագրութիւնը սահմանափակ» և իր գործունէութեան մէջ ճիշդ կը հետևի կանոնագրութեանը, քանի որ կանոնագրութիւնը այն չէ արտայայտում, որի մէջ համոզված են թէ պ. Նաւասարդեան և թէ այժմեան խորհրդի այլ անդամները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

—

Բէլգրադի մէջ մի անցք պատահեցաւ, նկատում է „Голосъ“ լրագիրը, որ նախատեսված էր Եւրոպայից դեռ այն ժամանակ, երբ ստորագրվեցաւ Բերլինի դաշնագիրը, բայց որ այնքան ուշացաւ զանազան մինչև այժմ չը մեկնված պատճառներով, որ անսպասելի նորութիւն էր Եւրոպական հասարակութեան համար։ Բէլգրադի սկուպշինան Սերբիան թագաւորութիւն յայտնեց և իշխան Միլան IV Օբրենովիչ, հնազանդվելով ժողովրդի կամքին, ընդունեց թագաւորական տիտղոսը։

Սերբիայի և նրա իշխանի անուանափոխութեան մասին սկսեցին խօսել դեռ այն ժամանակ, երբ Ռումինիան իրան թագաւորութիւն յայտնեց։ Այդ խօսակցութիւնները աւելի գրական ձև ստացան, երբ իշխան Միլան այցելեց Ս. Պետերբուրգ և Վիէննա և յետոյ յանկարծ դադարեցին, այնպէս որ Սերբիան թագաւորութիւն դարձնելու մասին լուրերը շատ ուշ ուշ էին ստացվում և այն էլ աննշան աղբիւրներից։ Վերջին ժամանակներում այդպիսի լուրերն էլ դադարեցին։ Այդպիսով Սերբիայի թագաւորութիւն յայտնելը մասամբ անսպասելի կերպով կատարվեցաւ, մանաւանդ այն մարդկերանց համար, որոնք ծանօթ չեն կառավարութիւնների բանակցութիւնների դաղտնիքների հետ։ Վերջին տեղեկութիւններից երևում է, որ մեծ պետութիւնների կառավարութիւնները դեռ մի քանի օր առաջ գիտացել են, թէ ինչ պէտք է կատարվի Սերբիայի մէջ և նրանցից մի քանիսը մինչև անգամ հրահանգներ են տուել իրանց ներկայացուցիչներին։ Նոյն օրը, որ Սերբիան թագաւորութիւն է յայտնվել Միլան թագաւորին ներկայացել են աւստրիական և թիւրքայ ներկայացուցիչները նրան շնորհաւորելու համար։ Մնացած պետութիւններն էլ երևի շուտով կը ճանաչեն Սերբիան թագաւորութիւն, որովհետև, „Polit. Corresp.“ լրագրի տեղեկութիւնների համեմատ, նրանք ամենքն էլ յայտնել են, որ Սերբիան թագաւորութիւն յայտնելու դէմ իրանք ոչինչ չունեն։

Չէ կարելի ուշադրութիւն չը դարձնել այն հանգամանքի վրա, որ Աւստրօ-Ունգարիան շտապեց պաշտօնապէս հաւանութիւն տալ այդ փոփոխութեանը։ Երևում է, որ Վիէննայի մէջ շտապում էին հաճելի լինել նոր թագաւորին և առաջին ընկնել այն կառավարութիւնների, որոնց բարեկամութիւնը և հովանաւորութիւնը ցանկալի է նոր թագաւորի համար։ Այդպիսի վարմունքի նը պատակը հասկանալի կը լիներ և այն ժամանակ, եթէ պաշտօնական նկատողութիւններ էլ չանվէին, բայց աւստրօ-ունգարական պաշտօնական «Abendpost» լրագիրը անհրաժեշտ համարեց նկատողութիւններ անել և խրատել Միլան թագաւորին։ „Abendpost.“ լրագիրը խորհուրդ է տալիս Միլան Օբրենովիչ I թագաւորին շարունակել այն քաղաքականութիւնը, որին հետևում էր վերջին ժամանակներում Սերբիայի կառավարութիւնը։ Վիէննայի պաշտօնական լրագիրը յիշեցնում է Սերբիայի թագաւորին և նրա մինիստրներին, որ նրանց համար անհրաժեշտ է պահպանել բարեկամական յարաբերութիւններ դրացի երկիրների հետ և անփոփոխ կատարել Սերբիայի միջազգային պարտականութիւնները։

Այդ խրատների և Աւստրիայի ներկայացուցչի այցելութեան միտքը շատ պարզ է։ Վիէննայի մէջ աշխատում են, որ Միլան թագաւորը բարոյական կախումն ունենայ Աւստրօ-Ունգարիայից և չը կարողանայ անկախութեամբ միջամտել այն անցքերին, որոնք կարող են պատահել Բալկանեան թերակղզու վրա մօտ ապագայում։

Աւստրօ-Ունգարական կառավարութեան այդպիսի ձգտումները մի քանի ժամանակից աջողվում էին Սերբիայի պաշտօնական շրջանների մէջ։ Միլան թագաւորի այժմեան խորհրդատուները յայտնի են իրանց համակրութեամբ դէպի Աւստրօ-Ունգարիան և թշնամութեամբ դէպի քաղաքական այն կուսակցութիւնը, որ միշտ պնդել է, թէ Սերբիան ամենից առաջ պէտք է զգուշանայ, որ Աւստրօ-Ունգարիայի գործիք չը դառնայ Բալկանեան թերակղզու վրա։ Այն ժամանակից, ինչ իշխանութիւնը այդ խորհրդատուների ձեռքն է անցել, շատ անցքեր են պատահել, որոնք ապացուցանում են սերբական մինիստրութեան համակրութիւնը դէպի Աւստրիան, բայց վիէննայում երևի երկիւղ են կրում, որ Միլան թագաւորը իր մինիստրութեան այդ տրամադրութիւնը կարող է անպարտար համարել և նոր խորհրդատուներ դտնել։ Այդ է պատճառը, որ Վիէննայի պաշտօնական լրագիրը բարեկամական խորհուրդներ է տալիս Միլան թագաւորին։

—

ԳԵՐՄԱՆԻԱ

—

„Голосъ“ լրագիրը հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները գերմանական զինուորական մամուլի մասին։ Աշխատելով իր պատերազմական ոյժերի զարգացման և կատարելագործութեան համար, Պրուսիան վերջին 75 տարիների ընթացքում ստեղծեց ինքնուրոյն պատերազմական ձև, արմատականապէս փոփոխեց իր զօրքերի կազմակերպութիւնը, ընդարձակօրէն գործադրեց տեխնիկական գիւտերը, մի շարք փայլուն յաղթութիւններով ապացուցեց իր պատերազմական ոյժի մեծութիւնը և իր զօրքերի շնորհիւ միացեալ Գերմանիայի գլուխն անցաւ, գերմանական փոքր պետութիւնների զօրքերը միացնելով և նրանցից մի նշանաւոր ոյժ կազմելով։

Գերմանական զինուորական ոյժերի ստեղծելու գործի մէջ ամենանշանաւոր գործը պատերազմական ոգու յարուցանելն է, այսինքն այն ոյժի առաջ բերելը, որ ստիպում է իւրաքանչիւր զինուորականի սիրով կատարել իր գործը և ոչ թէ ձևական կէտից նայել գործին։ Այդ հեռանքը առաջ բերելու համար պատերազմական մինիստրութենից գործադրած միջոցները բազմաթիւ են։ Նրանց մէջ նշանաւոր տեղը բռնում է գերմանական զինուորական մամուլը։

Պրուսական զինուորական մամուլը կարողանում է համապատասխանել իր կոչմանը մի կողմից շնորհիւ այն պայմանների, որոնցով նա շրջապատված է կառավարութենից և միւս կողմից իր սեփական յատկութիւնների օգնութեամբ։ Պրուսական զինուորական մամուլը կազմված է պաշտօնական և մասնաւոր հրատարակութիւններից։ Ինքը պատերազմական մինիստրութիւնը միայն մի լրագիր է հրատարակում „Militär-Wochenblatt,“ որ 76 տարի գոյութիւն ունի և մի ամսագիր։ Բայց դրա փոխարէն մասնաւոր գործունէութիւնը չափազանց ընդարձակ է։ Ներկայումս գերմանական զօրքերի համար հրատարակվում են 9 ամսագիրներ և լրագիրներ, որոնցից երկուսը բացառապէս զինուորների համար են։ Դրանք բոլորն էլ զինուորական նշանաւոր հրատարակութիւններ են, որոնք չափազանց հաւատարիմ են զօրքերին, պաշտպանում են նրանց շահերը և հոգում են նրանց ոյժի և զարգացման մասին։ Գերմանական զօրքերը ամենից շուտ իմանում են զինուորական գործի իւրաքանչիւր աջողութեան մասին, մի և նոյն է, թէ որտեղ է պատահում այդ աջողութիւնը։ Զօրքերի համար պատերազմական անցքերը և նրանց գնահատութիւնը ամենամանրամասնօրէն է կատարվում։ Գերմանական զօրքերը կատարեալ տեղեկութիւններ ունեն եւրոպական միւս պետութիւնների զօրքերի մասին և այն տեղերի վերաբերութեամբ, որտեղ մօտ ապագայում կարող են պատահել պատերազմական գործողութիւններ։ Մամուլի իւրաքանչիւր տարվայ գործունէութեան պակը կազմում է „Jahresberichte über die Veränderungen und Fortschritte im Militärwesen“ կլասիկական հրատարակութիւնը, որ հաւաքում է փաստեր, որոնք տեղի են ունեցել բոլոր եւրոպական և մի քանի ոչ եւրոպական պետութիւնների զօրքերի կազմակերպութեան և զինաւորելու համար։

Բացի այդ գերմանական զինուորական մամուլը ունի և կրթողական նպատակներ։ Մամուլը իւրաքանչիւր դէպքից օգուտ է քաղում իր ընթերցողների բարոյական ոգին բարձրացնելու համար, պահպանելու համար նրանց եռանդը դէպի այն ծանր աշխատանքը, որ վիճակվել է զօրքերին, քանի որ իշխան Ֆրիդրիխ-Կարլի խօսքերի համեմատ «գերմանական օֆիցերները աւելի են աշխատում, քան թէ նեգրները։» Գերմանական զինուորական մամուլը կատարելապէս գնահատել է գրականութեան կրթողական ընդարձակ նշանակութիւնը։ Մամուլը ազդում է զօրքերի վրա, ոչ թէ միայն յիշեցնելով նրա պարտականութիւնները, այլ և ազդելով նրա զգացմունքների և բանականութեան վրա։

Այնուհետև նկարագրելով գերմանական զինուորական մամուլի մի քանի անշան պակասութիւնները „Голосъ“ ասում է։

Գերմանական զինուորական մամուլի այդպիսի դրութիւնը կատարեալ իրաւունք է տալիս համարել նրան այն հիմնարկութիւններից մէկը, որոնք կազմում են գերմանական զօրքերի ոյժը։ Մամուլը ոչ թէ ձևական, այլ կենդանի լինելով, անհրաժեշտ է զօրքերի համար և նրա աննշան պակասութիւնները չէն արգելում նրան իր գործը աջողութեամբ կատարել։

—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Աւժիրիայից լրագիրներին հաղորդում են, որ այնտեղ կրկին թիւրքայ էմիսարներ յայտնվեցան, այդ ագիտացիային առաջնորդում է խէյրէդին-փաշան։ Կարծիք կայ, որ գարնանը նոր ապստամբութիւն կը սկսվի Աֆրիկայի հիւսիսում։

—«Morning Post» լրագրի թղթակիցը Փարիզից հաղորդում է, որ բազէն դիտաւորութիւն ունի դրել Մէցի պաշարման և անձնատուր լինելու պատմութիւնը։

—

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 մարտի։ Զերնօգօրիական իշխանը զօրքեր է կազմակերպում սահմանական պահապան զօրքերի թիւը մեծացնելու համար։ Պլատօնաց ուղարկված է Վիէննա, Զերնօգօրիա փախած կրիվոշ և Հերցոգովինայի ընտանիքների համար միջնորդելու նպատակով։ Մակէնզի դատաստանական գործը դեռ շարունակվում է, քննվում է ամենանշանաւոր տեղը, վերատուգվում է վարշավսկու խոստովանութիւնը կաշառքներ տալու մասին։ Պետական հողեր Օրէնբուրգի և Ուֆայի մէջ 1876—1881 թ. բաժանված են 498,471 դեսեատին, բաշկիրների հողեր ծախված են 770,000 դեսեատին։ Դիտաւորութիւն կայ Օրէնբուրգի զօրքերի օֆիցերներին բաժանել դարձեալ 460,523 դեսեատին։ Կոխանովի մասնաժողովի պարապմունքների նախագիծը ներկայացրած է ներքին գործերի մինիստրին։

—

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՁԱՏԻԿ գլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրիւկներ 4 ր., բիջակներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., դրապ, մահուդ, տրիկо, սրբիչներ և ալբոմներ կէս գնով։ Հնդկական բրինձ 6 կ., սագо և պերլովայա կրուպա 9 կ., պանիր չեստեր 70 կ., նշշտայ կոլմանի 18 կ. ֆունտը, լուծողական ձեթի պիլիւլներ 2 կ., լուացքի փոշի 5 կ։ **ՆՈՐՈՒԹԻՒՆ**։ Մեղրամոմ և արծաթէ մոմեր 35 և 42 կ. ֆունտը։ Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 ռուբլուց։ **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**։ 25—36

ԶՄԻՒՌՆԻԱՅԻ

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“ ամսագրին բաժանորդագրվում են Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան գրասենեակում։ Տարեկան գինը, 12 տետրակի 10 ռուբլ է։ Հասցէն՝ Тифлисъ, Газетное Агентство В. Шавердова. 3—10

ԹԻՖԼԻՍԻ հայ տիկնանց ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ընկերութեան կանոնադրութիւնը հաստատված լինելով բարձրագոյն կառավարութենից, մասնաժողովը խնդրում է տիկնանց յարգոյ հասարակութեան շնորհ բերել այս կիրակի, մարտի 7-ին, առաւօտեան ժամը 11-ին, Ս. ԳԱՅԱՆԵԱՆ օրիորդաց ուսումնարանի դահլիճը, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ կազմելու, վարչութեան անդամների ընտրութեան համար։

1—2

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մտնի մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մոտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. գորա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները թիֆլիսում կարող են գրուել „կենտրօնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մոտ. Բացու Բասիյսկիյ մագազինում, ինձ մոտ և „Մարդ ընկ“ դրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մոտ, որոնք բարեհաճել են այդ մասին սատրագրութեան թերթ ընդունել։

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր։ Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում։

Հրատարակիչ Աբել Դ. Ապրեսեանց

ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԵԴԻՏԻ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ։

Ընկերութեան վարչութիւնը պատիւ ունի յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ տարեկան **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ** նշանակվում է ներկայ տարվայ **ՄԱՐՏԻ** 14-ին։ Ժողովի տեղի և ժամի մասին առանձին կը յայտնվի։ 2—2

ԱՆԱՆՈՎԻ և ԿԱՅԱԼՈՎԻ պապիրոսների թղթի գլքոյկների գործարանը ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքում հարկաւոր է համարում պ. պ. գործածողների և գնողների ուշադրութիւնը դարձնել ֆրանսիական Abadie թղթի վրա մեր ստորագրութեամբ, Abadie գլքոյկը, 300 թերթերով արժէ 10 կ., իսկ 150 թերթերով արժէ 5 կոպէկ։ Գործածողները առանց որ և է դժուարութեան կը համոզվեն, որ սա հէնց այն թուղթն է, որը Кронъ-ի ստորագրութեամբ միշտ ծախվում էր և այժմ ևս ծախվում է շատ թանգ, այն է 300 թերթանոց տետրակը ծախվում է 15 կոպ., իսկ 150 թերթանոցը—7 կոպէկով։ Բացի ուրիշ լաւ թղթերի մեր ստորագրութեամբ ունենք և ամենալաւ ՄԱԻՍ (240 թերթը—5 կոպ.), որը կարելի է ստանալ եւրոպական Ռուսաստանի բոլոր ծխախոտավաճառների մագազիններում. մենք հակերով ենք ծախում (գոնէ ոչ պակաս հինգ կարօբկաներից)։

1—10

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Նոր ստացվեցաւ Ամերիկայից ՊԱԹԱՎԿԷ որն ուրիշ տեղ ծախվում է հատը մէկ ռուբլով, իսկ մեզ մոտ 40 կոպէկ է։ Արծրունու դալլերեում։

6—10

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

ԵՒԳԵՆԻԻ ԲԵՐՆԵԿՍ Վ. օրօնցօվսկայա փողոց № 46, սեփական տուն, **ԹԻՖԼԻՍՈՒՄ**։ Հիւանդային և ներկարարական **ԳՈՐԾԱՐԱՆ և ՊԱՀԵՍՏ** արջյունների, մարմարից և չուգունից շինված առարկաների։

4—5 (1)

ԹՄԻԶՔԻՆԵՐԻ առևտուրը դադարեցնելու պատճառով առաջին տեսակի **ԼՕՆԵԱԿԸ** վաճառվում է 1 ր. 10 կ. շիշը, **ՊՕՐՏ-ՎԷՅՆ և ԽԵՐԵՍ** 1 ր. շիշը։ **ԼՕՆԴՕՆԻ** խանութում **ԱՌԵՏՐԱԿԱՆ** բանկի տակ։

8—10

ՎԵՐԱԲԿՈՒՆԵՐ 4 ր., ծքծողներ 1 ր., ծալող սեղաններ 1 ր. 50 կ., ՓԱՅՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի սման քորոցներ 50 կ., պատակա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէվօլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 -ֆունտ թէյ, թէցամանով 1 ր. 65 կ.։ Եր-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։

96—100

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոնները. (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէյսօնի. պեատերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնուներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ուլթոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջազացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրամամալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրդուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեատատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, դդմներ սեղանի և չայու ֆիրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց դալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շերմայու ոսկրէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թել (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусь) ֆեչատկէք մարդկերանց և կանանց, պրոմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) *միջի փողոցում կաթոլիկայ փողոցի անկիւնում № 13.*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

5—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ՈՒՐԲԱԹ, 5 ՄԱՐՏԻ

Պալատական արտիստ Նորին Մեծութեան Նասրէդ-Դին պարսից Շահի ԲՕՌԷՐՏ ԼԷՆՑ աշակերտ և ազգական Նըշանաւոր պարսիկ Կամարդի, Մահմեդ Իսմայիլ Բէյի պատիւ կունենայ տալ ուրբաթ օր, մարտի 5-ին, Արծրունու Թատրոնում մի մեծ կախարդական ներկայացումն, ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ։ Լէնց կը կարի այդ ներկայացման ժամանակ մի կենդանի մարդու գլուխը։ 8.

Վերականգնելոց **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԻՆՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԹԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլուխցաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

87—100

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԵՂԲԱՐՑ ԾՈՎԵԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ.

ՍԻՕՆԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՆԱՆՈՎԻ ՏԱՆԸ

Գնում և վաճառում է ամեն տեսակ **ՏՈԿՈՍԱԲԵՐ** թղթեր, ոսկի և արծաթ դրամ։

Փոխ է տալիս դրամ, տոկոսաբեր թղթերի **ԳՐԱՒԱԿԱՆՆԵՐՈՎ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ** է անում Մոսկվա, Օդէսսա և Արտասահման։

ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ է ներքին 5% փոխառութեան տոմսակներ 50 կոպէկով.

ԸՆԴՈՒՆՈՒՄ է դրամ ըստ պահանջման 5%

„ „ „ ընթացիկ հաշուով. 5%

„ „ „ 6 ամիս ժամանակաւ. 6%

„ „ „ 12 „ „ 7%

Օտար քաղաքացւոց յանձնարարութիւնները կատարում են անմիջապէս և ճշգրտութեամբ։ 3—10 (1)

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Марта 1882 года. Типографія Главн. Упр. Намѣст. Кавказ. Лорисъ-Меликовская улица, каз. домъ.